

ԼՈՒՍԵՂԵՆ ԵՐԿՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ. ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

ԱԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20-րդ դարի սկզբի հայոց բանաստեղծության ամենամեծ հայտնագործությունը Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներն» էր: «Տերյանի երևումով,- գրում է Ավ. Իսահակյանը,- մեր քնարերգության մեջ մի նոր էջ բացվեց, նոր մեկնակետ՝ սիմվոլիզմը, որից ծայր առան նոր բանաստեղծներ»¹: «Նոր խոսք» ասելու պահանջը դառնում է Տերյանի բանաստեղծական գեղագիտության սկիզբը:

Տերյանը և Մեծարենցը ոչ միայն նոր թեմաներով և ձևերով հարստացրին հայ բանարվեստը, այլև ամենահարուստ և ամենանուրբ եղանակներով վերադարձրին միջնադարյան անկրկնելի քերթության ազնվաշխարհիկ կենսագրությունը, և հայ գրականության երկու հատվածներում սկիզբ դրվեց նոր գրական դպրոցի՝ սիմվոլիզմի գեղագիտությանը:

«Թումանյանը,- գրում է Հր. Թամրազյանը,- դպրոց չունեցավ: Այնինչ Տերյանը, մի շարք հարցերում զիջելով Թումանյանին և Իսահակյանին, դարձավ նոր դպրոցի հիմնադիր: Նրանից սկիզբ առավ Չարենցը: Տերյանի ազդեցությունը շատ ուժեղ էր 10-20-ական թվականների բոլոր բանաստեղծների վրա (Գառնիկ Քալաշյան, Արմ. Տիգրանյան, Ազատ Վշտունի, Ն. Չարյան, Գ. Սարյան)»²:

Ինչպե՞ս ձևավորվեց Տերյանի քնարերգության գեղագիտական համակարգը:

Հայնեի ասպետական հպարտությունը, անհաշտ մենությունը, ծուլված բողիբոյան «սրտախոց» թախծի նվագներին, ազնիվ հույզերին ու միստիկ որոնումներին, դարձան Տերյանի գեղագիտական հայացքների հիմնաքարը:

Տերյանը դեռ «Մթնշաղի անուրջներից» առաջ՝ 1906 թվականից, սկսել է թարգմանել Բողիբոյի «փոքրիկ արձակ պոեմները»: 1916 թվականի հոկտեմբերի 7-ին Ց. Խանզադյանին գրում է. «... Չթարգմանվածների մեջ կան սքանչելի բաներ, բայց ես գրեթե բոլոր պոեմներն եմ սքանչելի համարում, ուստի այդ պոեմների թարգմանությունը լոկ պատահական բան է,- ախր ես ամբողջն

¹ Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, Հայպետհրատ, 1964, էջ 30:

² Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, «Հայաստան», 1975, էջ 88:

էի ուզում թարգմանել մի ժամանակ (10 տարի առաջ), թարգմանել և հրատարակել»³:

Թարգմանությունը շատ բարձր է գնահատվել, իսկ «Թարգմանության լեզուն,- գրում է «Հորիզոնի» թղթակիցը,- «շատ գեղեցիկ է, իսկ տեղ-տեղ մինչև անգամ շքեղ» (1917, 22, 31 հունվարի): Անկասկած է, որ արձակ այդ և մյուս թարգմանությունների ընթացքում Տերյանը աշխատել է նախապատրաստել անցումը «սեփական արձակին» - իր վեպերին, արձակի ինքնուրույն ոճ մշակելու»⁴:

Շուրջ տասը տարի Տերյանը հաղորդակցվել է Բողերի քնարերգության կենսաթրթիռ տազնապներին, մենության ու թախծի անամոք նվագներին, լքվածության, անջատվածության խռովքներին, կյանքի ու մահվան, բողերյան ըմբռնումներին, Անհայտի, Անվերջության որոնումներին:

1907 թվականի ապրիլի 20-ին Օ. Օհանջանյանին ուղարկած նամակներից մեկում Տերյանը գրում է. «Չես կարող պատկերացնել, թե ինչպես եմ հոգնել, հոգնել ոչ թե աշխատանքից, այլ այս հավերժական թափառումից, հավերժական որոնումից... Եվ ահա ուզում եմ մեկնել որևէ տեղ, մի քիչ հանգստանալ՝ «ուր ուզում է լինի, միայն թե հեռու այս աշխարհից», ինչպես ասում է Բողերը...»⁵:

Խորին անձկությամբ, նրբացած տանջանքների ցավագին թրթիռներով բանաստեղծի հոգին տենչում է ինքնամոռացման: Նամակի շարունակությունը հետո պիտի հնչեր որպես բանաստեղծություն՝ լուտ, ցավոտ, անքննելի, տողերի ներսում ծավալվող նրբին մեղեդայնությամբ («Մթնշաղի անուրջներ», էջ 80).

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
Ամենին մոռանալ,
Չըսիրել, չըխորհել, չափսոսալ,
Հեռանա՛լ...
Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
Գիշերում այս անշող
Արդյոք կա՞ իրիկվա մոռացման
Մոռացման ոսկե շող...

³ **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, էջ 386-387:

⁴ Նույն տեղում, էջ 387-388:

⁵ Նույն տեղում, 46. Օ. Օհանջանյանին, էջ 221:

«Փույթ չէ թե ուր, միայն թե դուրս այս աշխարհից» արձակ այս պոեմը կարծես դարձավ ընդհանուր տրամադրություն, հոգեվիճակ սիմվոլիստ բանաստեղծների համար:

Բողերից հետո եկած բոլոր մեծ բանաստեղծները մեկնել են Բողերից ու նոր միայն հասել իրենք իրենց. այնքան մեծ էր նրա արվեստի ուժը: Ոչ ոք այնքան տառապագին չի զգացել հոգու և մարմնի մեջ թաքնված ճշմարտությունը, այնքան կատարյալ չի արտահայտել մեղքի և անմիջական զղջման բարդույթը, կյանքի անձկությունը, Գեղեցիկի հավերժական տենչանքը, ինչպես մեծ պառնասականը: Տերյանը Բողերից վերցրեց ոչ թե կյանքի նրբացած արատների ու անկման տանջանքների մեջ կործանվող բանաստեղծի անհասկանալի վիճակները, այլ անհայտ ու վեհ իդեալի անհագ ծարավով տառապող հոգու վեհագույն ձգտումները, նաև այն անորսալի, երբեմն մշուշոտ, առեղծվածային, բայց և միաժամանակ լուսեղեն թախիժը, որ հատուկ է զգալուն հոգիներին:

Իր հոգվածներում և նամակներում Տերյանը հաճախ հիշատակում է ոչ միայն Շ. Բողերի, այլև Կ. Համսունի, Իբսենի, Պ. Վերլենի, Է. Վերհարնի անունները:

Սակայն Տերյանին իր տրամադրություններով ավելի հարազատ է Պոլ Վերլենը: «Սիմվոլիստներից թերևս ոչ ոք,- գրում է Կ. Գրիգորյանը,- ավելի ուժեղ ազդեցություն չի ունեցել Տերյանի վրա, որքան «մեղմախոս Վերլենը»⁶: Ստ. Մալարմեի և Ա. Ռեմբոյի հետ միասին Վերլենը դարձավ սիմվոլիստական քնարերգության հիմնադիրը: Ավա՛ղ, Վերլենի հանճարը չգնահատվեց ժամանակին: Այն կորովն ու քնքշությունը, ողբերգությունն ու վեհությունը, որ նրա տիեզերագնացողության տարրերն էին, այն օդում լուծվող բանաստեղծությունը, որ սահմանակից էր հավերժությանը, պիտի արժևորվեր ավելի ուշ:

Պոլ Կլոդելն իր «Վերլեն» բանաստեղծության մեջ գրում է. «Նա այն նավազն եղավ լքված...» կամ «անծով նավագ, անկիլոմետր ուղիների թափառական»:

Սակայն գույնի ու երանգի բանաստեղծը իր մահից հետո միայն պիտի բացահայտվեր որպես մեծ գեղագետ.

Արդ, միաձայն փառաբանենք մենք Վերլենին այսօր, երբ
մեզ ասում են, թե մեռած է նա:

⁶ Գրիգորյան Կ., Վահան Տերյան, Երևան, ԳԱ հրատ., 1983, էջ 78:

Փառաբանանք է, որ չկար նրա կյանքում, և հրաշքն էլ
այն է հիմա,

Որ բոլորս հասկանում ենք իր երգերը⁷:

Վերլենի «Արվեստ քերթողականը» դառնում է սիմվոլիստների գեղագիտության ծրագիրը: Վերլենի երաժշտական բանաստեղծությունը: ... Այն բոլորովին նոր էր՝ գույնի, երանգի, լույսի, մեղեդայնության ներհյուսված զգայնություններով՝ «Երաժշտություն նախքան ամեն ինչ», «ոչ մի գույն, միայն երանգներ» («Ֆրանսիական պոեզիա», Երևան, համալսարանի հրատ., 1984, էջ 292)։

Թող տողը լինի անանուխ ու թյում՝
Շոյող վաղորդյան քամու մեջ ցրված,
Մի բարեպատեհ, երջանիկ դիպված...
Ողջ մնացյալն է գրականություն...

Արդյոք Վերլենի «Զգացական գրույցից» չե՞ն սկիզբ առել Տերյանի «Ուրվական», «Երկու ուրվական» բանաստեղծությունները:

Խզված է կապը իրականության հետ: Բանաստեղծն այլևս տեսանող է: Երևակայությամբ ուղղորդված պայծառացումներում նրա հոգին թևածում է դեպի այնաշխարհային կարոտները: Նա այլևս այս աշխարհում չէ: Նրա հոգին թափառում է կորցրած կարոտների, կորցրած սիրո երփներանգության մեջ: Նա ստվեր է, ուրու, տեսիլ: Հին, ամայի այգում նա գտել է անցյալի սիրո իր ստվերը, և երկու ուրուներ ոգում են անցած սիրո զմայլանքը հին.

Հին ու ամայի այգու մեջ ցրտին
Երկու ուրուներ անցյալն ոգեցին.
-Հիշու՞մ ես դու մեր զմայլանքը հին.
-Ինչու՞ եք ուզում, որ հիշեմ կրկին...
-Հույսն ինչքա՞ն մեծ էր, երկինքն ինչքա՞ն բաց
-Մութ երկինք թռավ հույսը պարտված...⁸

⁷ Ֆրանսիական դասական քնարերգության ծաղկաքաղ, Երևան, «Սովետական գրող», 1976, էջ 198-200:

⁸ Նույն տեղում, էջ 142:

Տերյանի «Երկու ուրվական» բանաստեղծության մեջ վերիրական կա-
րոտների լուսեղեն աշխարհում երկու ուրուներ հավերժորեն ձուլվում են իրար:
Կյանքը հաստատվում է անհայտ մի աշխարհում: Այլևս չկան իրական կյանքի
խելահեղ տանջանքները, ահարկու օրերի խավարը. կյանքի իրական գույները
մշուշվում են, մեկ ուրիշ Լույս է հավերժորեն ցոլում-Անհայտ աշխարհի Հավեր-
ժական Լռության մեջ («Մթնշաղի անուրջներ», Երկու ուրվական, էջ 178).

Ես եմ, դու ես, ես ու դու
Գիշերում այս դյութական,
Մենք մենակ ենք,- ես ու դու.
Ես էլ դու եմ, ես չկամ...

Մոռացել ենք անցյալում
Տրտունջ, թախիժ ու խավար.-
Մի ուրիշ լույս է ցոլում
Մեղմ ու անուշ մեզ համար...

Նույն՝ Գեղեցկության Տեսիլքի թրթռացող ստվերն է «Ուրվական» բա-
նաստեղծության մեջ: Չկա սեր իրական աշխարհում. այն ապրում է անհայտ
հեռոններում՝ որպես թրթռացող լույս, անանց կարոտ լույս հեռոններում. մեկ
այլ, ուրիշ աշխարհի («Մթնշաղի անուրջներ», Ուրվական, էջ 166).

Մթնշաղային ժամերին, երբ ես
Ընկնում եմ, հոգնաժ օրերից ունայն,
Հայտնվում ես դու նուրբ ու լուսերես
Ու հետքս նստում քնքշությամբ անձայն...
...Ու քեզ հետ նստած, գիտեմ,- դու չես այն,
Ըստվերդ է միայն, ըստվերդ է միայն...

Այո՛, անվիճելի են Վերլենի «Զգացական գրույցի» միստիկ տրամադրու-
թյունների նուրբ անցումները Տերյանի այս երկու ստեղծագործություններում:

1871 թվականի մայիսին սիմվոլիստ բանաստեղծներից ամենախենթը՝
Արթյուր Դեմբոն, գրում է. «Ես ուզում եմ լինել պոետ, և ես փորձում եմ դառնալ
պայծառատես... Խոսքն այն մասին է, որ հասնեմ բոլոր անհասկանալի զգա-
ցումների բացահայտմանը: Տառապանքները մեծ են, սակայն հարկավոր է

լինել ուժեղ, եթե ծնվել ես պոետ... Նա փնտրում է ինքն իրեն, նա ինքն է խմում ամբողջ թույնը»⁹:

Այս խոսքերի մեջ է կարծես սիմվոլիզմի գեղագիտական ըմբռնումների հոգևոր կողմը: Բանաստեղծը, փորձելով վերձանել անհասկանալին, միևնույն ժամանակ խորանում է իրական կյանքի ցավերի մեջ. նա ինքն է խմում կյանքի ամբողջ «թույնը»՝ հավերժական Թախիծը, և քանի որ մեծ Տեսանող է և մեծ մարդասեր, կարող է նաև իր մեջ պահել աշխարհի ողջ ցավն ու դառնությունը:

Տերյանի թախծի երակները նույնպես բխում են համաշխարհային թախծի նույն ակունքներից:

Բողբերը գրեց «թախիժ՝ փողոցի համար», անդունդներում թափառող նրա միտքը փնտրեց անհայտ երկիրը. («Ե՛կ. ճախրի՛ր երագների եզերքում, Անհնարինի աշխարհում, ոլորտներում անհայտի»)՝¹⁰, փարիզյան թանձր մառախուղների մեջ ապրեց անհայտ հեռուների լուսե անձկությամբ. ամբողջ ժամանակ, ամբողջ էությամբ անձնատուր լինելով մեծ քաղաքների արբեցմանը, խորապես դատապարտված մենության գիտակցությամբ՝ պահեց վսեմ ներշնչանքի մաքուր հույզերը. «Դժգոհ բոլորից և դժգոհ ինձնից՝ կուգեի լիովին մաքրագործվել ու վեհանալ մի քիչ գիշերվա լռության ու մենության մեջ»¹¹:

«Անցյալում և մեր օրերում,- գրում է Կ. Գրիգորյանը,- քննադատությունը նշել է միստիցիզմի տարրերը Տերյանի մոտ՝ փորձելով բացատրել այն սիմվոլիզմի ազդեցությամբ, սակայն նա իր լուսեղեն թախիծով հեռու է Մերեժկովսկու կամ Սոլովյովի մոայլ միստիկական տրամադրություններից»¹²:

Սակայն Տերյանի քնարերգության մեջ միստիկական անհրաժեշտ է դիտել որպես առանձին թեմա, նրա բանաստեղծական գեղագիտության ամենաբարձր ըմբռնում և որակ, նրա հոգևոր լույսի և աշխարհընկալման բացարձակ արտահայտություն: Սկսած «Մթնշաղի անուրջներ» ժողովածուից մինչև «Գիշեր և հուշեր», «Ոսկե հեքիաթ», շարքերից դուրս մնացած երգերում և անգամ սևագրություններում Տերյանն ապրել է Այնաշխարհայինի կարոտներով: Երկու աշխարհների՝ Այսաշխարհի ու Այնաշխարհի սահմանագծերում ապրող բանաստեղծի հոգին մշտապես թափառել է խորհրդավոր Անհայտի հեռուներում: Տերյանի լռության ու ակնարկների լեզուն դառնում է նրա հոգևոր կյանքի արտահայտիչը: Գեղեցիկի բարձր գիտակցության մեջ Տերյանը հայտնագործում

⁹ История зарубежной литературы, Москва, «Высшая школа», 1978, стр. 78.

¹⁰ **Բողբեր Շ.**, Չարի ծաղիկներ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1990, էջ 152:

¹¹ Նույն տեղում, էջ 168-169:

¹² **Գրիգորյան Կ.**, Վահան Տերյան, Երևան, 1965, էջ 30:

է Աստծուն: Միայն և միայն Գեղեցիկի միջոցով է, որ ընկալվում է բարձրագույն հոգևոր կյանքը: Լուսեղեյան հայտնությունը միակ կարևոր և նշանակալից տարրն է նրա քնարերգության մեջ:

Նարեկացին միստիկ էր և Աստծուն տեսնում էր ամենուր, Թումանյանը միստիկ էր՝ հավերժորեն ծովված աստվածային էությանը. Տերյանը շարունակում է նրանց՝ իրեն հատուկ նրբությամբ երգելով Լուսեղեն Երկրի կարոտները («Մթնշաղի անուրջներ», Հեռավոր, անել լեռնագագաթներ, էջ 75)։

Թող իմ աչքերը լույսից կուրանան,
Թող սիրտս լցվի արևի բոցով.
-Օ՛, երջանկություն անել բարձրության,
Լուսեղեն երկնի անեզրական ծո՛վ...

Ահա «Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում» բանաստեղծությունը: Առաջին հայացքից վերջալույսի բնանկար հիշեցնող բանաստեղծությունը պարուրված է նուրբ, միստիկ շղարշով: Երփնագրողի թրթռուն վրձնահարվածները ստեղծում են իրիկնամուտի դյութական հմայքը: Դժգույն լույսերի երփնախաղերը հյուսվում են մուգի սահող տրտմության «ստվերներին»: Ամեն ինչ սուզված է ծաղիկների խնկաբույրի մեջ՝ մենության, թախիծ, անհայտության: Զգայուն, արծաթեբանգ լույսի պաղ ցուլքերում «Հավետ լուծ է մի տխուր խորհուրդ, Վառվում է հավետ մի անանց կարոտ»: Միայն վերջին տողն է, որ բացահայտում է «անանց կարոտի» առեղծվածը. «Փառքիդ ստվե՞րն է իմ կյանքը կարոտ» («Մթնշաղի անուրջներ», էջ 46):

Հայտնության խորհուրդը. այս է բանաստեղծի բացարձակ ձգտումը: Իրականի և անիրականի, տեսանելիի և անտեսանելիի կապը ընկալվում է վերջին տողի լուռ ակնարկով:

Միշտ անակնկալ, անսպասելի, երբ հուսահատությունն անցնում է բոլոր սահմանները, որտեղ ավարտվում են երկրային տանջանքները, որտեղ նրբորեն ներդաշնակվում են լույսն ու մուգը, հայտնվում է մեկը: Մեկն անուն չունի, այն տեսիլք է՝ լույսի և մաքրության, սփոփանքն է ու սեր անվախճան («Մթնշաղի անուրջներ», Կարոտ, էջ 40)։

Իմ անվերջ ճամփի տանջանքից հոգնած՝
Ես ննջել էի ոսկեղեն արտում.
Ու ճչաց սիրտըս վայելքից անկարծ.

-Թվաց, որ մեկը կանչում է տրտում...

Ամեն, ամեն ինչ չնչին ու ողորմելի է դառնում լուսեղեն երկրի առեղծվածի դիմաց՝ սեր, վայելք, հիշողություն: Ահա «Կարուսել» բանաստեղծության այս տողերը («Ոսկի հեքիաթ», հ.1, էջ 202)։

Եվ այն վալսը- «Անդարձ Ժամանակ»,
Ծառուղին ամայի պուրակում,
Եվ գիշեր, և՛ համբույր, և՛ լուսնյակ...
Տաղտկալի՛, ծանձրալի՛ պատմություն...

Գեղեցիկի չընդհատվող որոնումը իրական կյանքի տանջանքների մեջ մշտապես հայտնագործում է Անհայտին։

Ահա կրկին ուրվագծվում է նրբահյուս մթնշաղի անմոռաց հեքիաթը։ Լույս հնչյունների թրթիռը դողում է խավարում, լուծվում վառվող, մարող աստղերի ցուլքերի մեջ, նրբորեն շեշտվում են լույսի անցումները, ստեղծվում է բնանկարը, որտեղ ձուլվում են հոգին ու բնությունը։ Տողերի ներսում սահող մեղմ երաժշտությունը հյուսվում է անսահման հեռուների զգացողությանը, լուծվում օդի մեջ։ Բանաստեղծը կրկին դիմում է մեկին։ Ո՛չ, դա ցնորք աղջիկ չէ. դա ավելին է, քան աշխարհիկ հույզը. «հեռաձավալ անհայտներում» առկայծում է «անձանոթ տաճարի» պատրանքը. («Մթնշաղի անուրջներ», Եվ մոռացված, և անմոռաց հեքիաթներ, էջ 30)։

-Կյանքըս հավետ քեզ անձանոթ տաճարում
Կանթեղի պես առկայծում է քո դիմաց...

Անուրջների այս շղթայում կա մի երգ՝ անասելի նրբությամբ հյուսված մի աղոթք, հոգևոր լույսի պայծառ մի մեղեդի, անմրցելի՝ իր անսպառ քնքշությամբ։ Կապույտ հեռուներից հնչում է մի ձայն. երկնային Լույսին է, որ իջնում է երկիր։ Տեսիլքը դառնում է իրական, շարժում է թփերը, շրշում ու կանչում։ Բանաստեղծի անմահ հոգին հավերժորեն ձուլվում է Լույսին ու անէանում անհայտ հեռուների կապույտ անրջանքում («Մթնշաղի անուրջներ», էջ 90)։

Կանչում ես անվերջ
Կապույտ հեռվից,

Շշուկով անուշ
Կանչում ես ինձ...

...Այս իրիկնային
Կապույտ երկրում
Դու ես միշտ շրջում
Ու մեղմ երգում...

1912 թվականին Տերյանը Անթառամ Միսկարյանին գրում է. «...Եվ ահա այդ հավերժական շշուկից այն մասին, որ ես մեռած եմ, որ ես մեկի ստվերն եմ, որը մի ժամանակ ապրում էր, մի տեսակ տարօրինակ եմ զգում՝ լավ և տխուր: Այդ պահերին զգում եմ ինչ-որ ազատություն, խանդաղատագին հնազանդություն և «մեղմություն»:

...Եվ հանկարծ տեսնում եմ արևը... Կարծես թե հարություն ես առնում, բայց հարություն ես առնում մի այլ տեսակի կյանքով, ապրում ես ինչ-որ այլ տեսակի զգացմունքներով, սրված ու նուրբ, ես կասեի «երաժշտական զգացմունքներով...»¹³:

Նույն թվականին է գրված «Մահ-ցնորք» բանաստեղծությունը:

Թե՛ նամակում, թե՛ բանաստեղծության մեջ նույն՝ հոգիացած ինքնասուզումն է, Հավերժական հրճվանքը, մեռնելու և հարություն առնելու գաղափարը: Մահը՝ որպես կյանքի սկիզբ, Գեղեցկության անքննելի կարողություն. («Ոսկի հեքիաթ», էջ 187).

Փռված եմ ահա քո գեղեցկության,
Քո անքննելի կարողության դեմ.
Լուսավորի՛ր սև համրությունն իմ տան.
Ամբողջ աշխարհը քո ցուլն է արդեն:
Հայտնվի՛ր անհուն փայլով ու փառքով,
Ժպիտըդ փոփոխ իմ երկրի մթնում.
Տանջի՛ր ինձ վերջին քաղցր տանջանքով,
Քեզ գո՛վք, քեզ օրհնե՛ք, քեզ փա՛ռք անհատնում...

Տերյանի թախիժը հատկապես խորն է 1904-1908 թվականներին գրված բանաստեղծություններում: Նրա նուրբ հոգին անգոյության խավարում մոր-

¹³ Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Սովետական գրող», 1979, էջ 49:

մոքում է վերահաս տագնապներից. ահագնանում է երկյուղը, ծնվում է մթին կասկածը («Մթնշաղի անուրջներ», Մոայլ թաղումի ջահերի նման, էջ 77)։

Իմ սրտում միայն սառած հեկեկանք,
Բայց արցունք չկա իմ սև օրերում.
Մեռնում է սիրտըս անհուն խավարում,
Եվ դու կա՞ս արդյոք, լուսե անրջանք...

Նրա հոգևոր երկինքը, որ թափառում էր Անհայտի ոլորտներում, մշուշվում է դաժան իրականության առջև։ Ցավը հայրենիքի, կորուստները անդառնալի, ցուրտ հյուսիսը նրան նետում են խորին անձկության մեջ։ Թանձր խավարում սև շղարշով են պատում հոգու արևները։ Տենդոտ, խենթ մի ցանկությամբ նա հենարան է փնտրում ու ճնշող մեկության մեջ կանչում Լուսեղեն Յնորքին։

1904 թվականին Տերյանը գրում է «Աղոթք» բանաստեղծությունը, որն ունի բնաբան՝ վերցրած Սաֆոյից. «Քո պայծառ գահի անհաս բարձունքից Մի՛ մերժիր սրտիս աղոթքը անբիծ»։

Լռության գիշերն է հոգու մեջ, հույսի դռները փակված են հավիտյան, խավար անդունդներում կորցրել է վերադարձի ուղին։

Տագնապի սարսուռներով հնչում է հուսահատ աղոթքը. միայն Նա՛ է փրկությունը («Մթնշաղի անուրջներ», Յնորք, էջ 76)։

Ես ընկա անդունդները խավար,
-Իմ ցնորք, նորից քեզ եմ կանչում.
Մոռացա ուղիներըս պայծառ,
Իմ սրտում դառը մութն է շնչում։

Դու անմութ աշխարհում ես ապրում,
Հիշի՛ր դու խավարում տանջվողին,
Քո սրտում արևներ են վառվում,
Արևի՛ր սև կյանքիս մութ ուղին...

Տերյանը եկել էր գույների և ձևերի անձանոթ աշխարհից։ Եվ նրա հոգին ինքնամոռաց տենչանքով թևածում է նույն աշխարհը՝ հայտնագործելով նոր հույզեր։ Սրանով նա փախուստի չի դիմում, այլ բացահայտում է, գտնում իրեն՝

հաղորդակցվելով Բացարձակի, Անվախճանի խորհուրդներին («Աթնշաղի անուրջներ», էջ 97)։

Հեռու երկրի լուսե հովտում
Օրերն ուրիշ երգ են հյուսում,
Կյանքից հոգնած սիրտս տրտում
Այն երկիրն է միշտ երազում...

Սակայն առանձնանալու զորավոր կարողը չի կտրում նրան իրական աշխարհից։

Անհայտ հեռուներում կյանքի և մահվան առեղծվածը քննող բանաստեղծի հոգին հույզերի ամբողջ խռովքով ու ողբերգությամբ որոնում է փրկության ուղի իր՝ արդեն տեսիլ դարձած հայրենիքի համար։

Անձնական ցավի ամբողջ դրաման խտանում է հայրենական Տառապանքի մեջ։ Սև խոհերի մութ կասկածներում բարձրանում են հուսահատ հարցումները՝ ո՞վ կգա, ո՞վ կփրկի, ո՞վ ցույց կտա տան ճանապարհը (հ. 1, էջ 275)։

Մենք նետված ենք բոլորս
Երկիրն այս հեռու,
Կանչում ենք միշտ – ձայն չկա,
Աղոթում ենք ու՛մ,

Ո՞վ կփրկե, ո՞վ կգա,
Որ տանի մեզ տուն...

Այս մորմոքումները, անընդհատ ծավալվող վշտի հեծեծանքները հիշեցնում են ֆրանսիացի բանաստեղծի լուռ տառապանքները։ Աշխարհի, հայրենիքի ցավով ապրող հոգիների համար համամարդկային վիշտը դառնում է անձնական ողբերգություն. «Բայց ոչ մի հարազատ ձեռք,- գրում է Ա. Ռեմբոն,- և որտեղի՞ց հայցել օգնություն... Երթ, բեռ, անապատ ու զայրույթ։ Ու՛մ վարձկանը դառնալ։ Ո՞ր գազանին պաշտել։ Ո՞ր սրբապատկերը երկրպագել։ Ու՛մ սիրտը կոտրել։ Ո՞ր կեղծիքը պետք է թաքցնել։ Ու՛մ արյունով պետք է քայլել» (Ա. Ռեմբո, Խոսքի Ալքիմիա, Մի եղանակ դժոխքում, էջ 87)։

Սակայն երկու բանաստեղծների համար էլ փրկության մի դուռ կա միայն։ Երկրային տանջանքներից, գիշերային անձկություններից, խավարա-

մած վիհերից այն կողմ հայտնվում է Նա՝ կարեկից, աննվազ, գորովոտ: Անդիմադրելի, ակնթարթային արագությամբ փոխվում են տազնապն ու մահվան սարսուռները, ցրվում է հոգին պարուրած միգամածությունը, հայտնվում է Լույսը. «Անդունդից Քե՛գ եմ դիմում, Տեր», - հնչում է աղաղակը (Ա. Ռեմբո, նույն տեղում, էջ 84):

Նուրբ, թրթռագին, տազնապահար, նաև անորակելի մի խաղաղությամբ Տերյանը հնչեցնում է իր լուսավոր աղոթքը՝ հաղթահարելով սև մշուշների վիատեցնող մղձավանջը (Վ. Տերյան, հ. 1, էջ 289)։

Գիշերն իջավ սև ու չարաչք.
Լինենք խաղաղ, մեղմ աղոթենք,
Գուցե բացվի լուսե հրաշք,

Գուցե անցնի խավարակուռ
Մշուշն այս չար, և ազատվենք-
Լինենք մանուկ, լինենք մաքուր.

Մեր սրտերում պահենք մի հուր,
Խաղաղ մի լույս խավարում չար,
Գուցե բացվի զնդանն անդուռ.

Օրհնենք բոլորն, ինչ էլ որ գա,
Եվ ընդունենք սրտով հոժար,
Գուցե և Նա մեր ցավն զգա...

1917 թվականին գրված այս երգը իր խորքով հոգևոր աղոթք է և հիշեցնում է միջնադարյան շարականները, պահպանված է անգամ շարականի տաղաչափությունը՝ եռատող, որը խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը: Բանաստեղծությունը շնչում է հոգևոր երգերին բնորոշ լուսավոր մեղեդայնությամբ, զգացմունքների բացարձակ մաքրությամբ, միայն Տերյանին բնորոշ լուսեղեն թախծի անցումներով:

Նույն թվականին գրված այլ բանաստեղծություններում՝ «Տնակն իմ ցուրտ և անգարդ», «Սրտակեզ կսկիծ մի հին», «Երկու դժբախտ մանուկ», «Անգարդ իմ օրվան...», կարծես ընդհատվում է աղոթքը, ցավը թանձրանում է՝ դառնալով անորոշություն, լքվածություն, հուսահատություն: Բոլոր պատկեր-

ներն էլ ունեն ենթատեքստեր: Լռության, սպասումների մեջ, սև գիշերների անհույս խավարում պայծառատես բանաստեղծի հոգին թափանցել է ներկայից այն կողմ՝ տեսնելով և՛ եկող աղետներն ու մահերը, և՛ մոխիրներից հարություն առնող հրկեզ հոգին («Անզարդ իմ օրվան», հ. 1, էջ 273)։

Անզարդ իմ օրվան, անտուն իմ կյանքին
Դեռ շատ է գալու և՛ բոթ, և՛ աղետ,
Մինչև ազատվի հրկեզ իմ հոգին,
Հարություն առնե մոխրից առհավետ...

Կյանքի ոսկեղեն հեքիաթը հյուսող բանաստեղծը հեռվից տեսնում է Նաիրի երկրի արյունոտ համապատկերը: Դատապարտված են սերը, երազանքը, իրական հույզերը: Սաստկանում է մահվան գիտակցությունը, անխուսափելի է կործանումը («Սրտակեզ կսկիծ մի հին», հ. 1, էջ 286)։

Գնում եմ ուղին իմ ծուռ
Եվ գիտեմ՝ դեպի կորուստ.
Նիշված է բախտս վերուստ...
Եվ չըկա փրկության դուռ...

Այս նույն՝ եղբրական տագնապներն են հնչում նաև այդ թվականին գրված նամակներում: Երկու զավակների հիվանդությունն ու մահը, իր խորացող հիվանդությունը, հայրենիքից եկող լուրերը, կիսատ մնացած գործերը. ամեն ինչ դառնում է «սրտակեզ կսկիծ»:

«Այստեղ, ոչ ոքի չճանաչելով, հիվանդ, ես անզոր եմ», - գրում է Հովհ. Թումանյանին (1917, 17 մարտի, Սուփումի, հ. 4, էջ 309):

«Ես հիմա այնպես տխուր-տխուր եմ, բայց և թեթև, կարծես վախճանվել եմ, կարծես կենդանի չեմ արդեն, այլ սոսկ ստվեր, հուշ որևէ տեղ», - հնչում է մի այլ նամակում (1917, հուլիսի II կես, Ախալքալաք, Մ. Շահխաթունուն):

Իսկ Կ. Միքայելյանին գրած նամակում խնդրում է իր համար Մետերլինկ գտնել, «Ես կուզեի Մետերլինկ ևս վերցնել, բայց որտեղի՞ց ճարեմ նրա բնագիրը: Խնդրեմ այդտեղ Գոթիեյի գրախանութում հարցնես, թե արդյոք կա՞ Մետերլինկի երկերի ժողովածուն և ի՞նչ արժե» (1917, 11 փետրվարի, Սուփումի, հ. 4, էջ 107):

Ինչու՞ էր Տերյանը ցանկանում հատկապես Մետերլինկ: Դա միայն մի բացատրություն ունի. Մետերլինկի իմաստասիրությունը կյանքի և մահվան մասին. մահվան եզակի, բացառիկ լինելը, բացարձակ հոգիացումը, սովերների այնաշխարհը: Ծնվում են մութ կասկածները, երկփեղկվում է հավատը. «Լուսեղեն Հրաշքի» պատկերը աղոտանում է, պողթկում են ահով լցված աղաղակներ («Երկու դժբախտ մանուկ», հ. 1, էջ 285)։

Ո՞վ մեր հոգին խոցված
Պիտի փրկե մահից,
Եթե չըկա աստված...

Նույն անհույս խռովքի մեջ է Ա. Ռեմբոն. «Հոգին մոտիկ է, ինչու՞ Քրիստոսը ինձ օգնական չէ. ինչու՞ չի ընծայում հոգուս ազնվություն և ազատություն: Ավա՛ղ, Ավետարանն էլ սպառեց իրեն: Ավետարա՛ն, Ավետարա՛ն:

Աստծուն սպասում եմ անհագ որկրամոլի նման...

...Այժմ ես անհիծված եմ. սոսկում եմ հայրենիքից» (Ա. Ռեմբո, Մի եղանակ դժոխքում, էջ 86-87):

Ինտրայի ներաշխարհային պայծառացումներում նույնպես բեկվում է հավատը. աղոթքները ինչու՞մ են մերթ արտասվագին հափշտակություններով, մերթ ընդհատվում տարապայմանի երկյուղած համադրությամբ. «Վասնզի ու՞րկե է Աստծու գաղափարովը չպաշարվելու, Հիսուսի կերպարանեն չմշտագրավվելու այս անկարողությունը. ինչու՞ ամեն բան Եկեղեցվույն մեջ այդ տրտմեցնող տեսիլները կվերակոչե... Ինչու՞ անոնցմով լալագին սպառնալիք մ՞ է ամեն բան»¹⁴:

Անգամ մեծ Նարեկացին ապրել է տարակուսանքների ու տագնապների մեջ.

Չլինի՛, որ ես երկնեմ՝ չծնեմ,
Ողբամ՝ չարտասվեմ, խորհեմ՝ չհառաչեմ,
Ամպեմ՝ չանձրևեմ, քայլեմ՝ չհասնեմ,
Ես ծայն տամ, սակայն դու ինձ չլսես,
Պաղատեմ, սակայն անտեսես դու ինձ...

Սակայն այս կասկածները տևական չեն և երբեք չեն մթագնել մեծ

¹⁴ **Զրաքյան Տ.**, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1981, էջ 142:

հոգիների՝ մշտապես խնկարկվող քաղցր իմացականությունը: Նրանց բոլոր պայծառացումները գալիս էին Այնաշխարհից և նյարդ առ նյարդ միանում և ամրանում մեկ Գաղափարի մեջ:

«Քեզ այնքան անգույթ...» բանաստեղծության մեջ արդեն Տերյանը հաստատ է իր հավատի մեջ («Քեզ այնքան անգույթ...», հ. 2, էջ 14)։

Քեզ, իմաստնագույն
Խիզախ նավապետ,
Հանձնում եմ հավետ
Նավակն իմ բեկուն.
Միայն դու, անքուն
Բոցե նավավար,
Գիտես ճանապարհ
Մթնում այս անհուն...

Գրականագիտության մեջ առաջին անգամը չէ, որ Տերյանի և Չարենցի քնարերգության ակունքներից մեկը համարել են Ալ. Բլոկի ստեղծագործությունը: «Մյուս կողմից չի կարելի չնշել,- գրում է Վ. Դավթյանը,- թե Բլոկի պոեզիան ինչպիսի մասնակցություն է բերել հայ երկու այնպիսի մեծ բանաստեղծների ձևավորմանը, ինչպիսիք են Տերյանն ու Չարենցը: Եվ այդ ամենը հույժ բնական է. ժողովուրդների մշակույթները միմյանց փոխազդելով ու հարստացնելով են զարգանում»¹⁵:

Ինչպես Տերյանի, այնպես էլ Ալ. Բլոկի ամբողջ քնարերգությունը ներթափանցված է այնեկրային տագնապներով: Անցողիկ հուզում չէ այդ իմացականությունը, այլ ճշմարիտ խոստովանություն ու կանխագուշակություն. «Ոչ ոք չի մեռել, ու չի ավարտել ապրել ոչ ոք»¹⁶, - գրում է Ալ. Բլոկը:

Տերյանի «Հիմա երկրում իմ բարձրիկ» բանաստեղծությունն իր խորքով և պատկերային համակարգով հիշեցնում է Ալ. Բլոկի «Տասներկուսը» պոեմը: Խորհրդանիշ պատկերները՝ սև գիշեր, սպիտակ ծյուն, մրրիկ, վարդերով պսակված Հիսուս, որ առաջնորդում է ժողովրդին (Ալ. Բլոկ, Տասներկուսը, էջ 186)։

Սև իրիկուն.
Սպիտակ ծյուն.

¹⁵ Բլոկ Ա., Եսենին Ս., Ընտիր երկեր, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 14:

¹⁶ Նույն տեղում, էջ 32:

Քամի՛, քամի՛.
 Մարդ հագիվ է ոտքը գցում.
 Քամի՛, քամի՛.

Ողջ աշխարհում միանգամից...
 Ձյունափոշու մեջ փայլում,
 Մթնում առաջ է քայլում
 Ինքը՝ Հիսուս սուրբ որդին,
 Վարդե պսակը գլխին...

Ահա Տերյանի բանաստեղծությունը. բարձրիկ մի երկիր, լռիկ ամայություն, ահեղ ու խոր գիշեր, անտուն շրջող մի ճամփորդ՝ ճակատը փշով պատած, բուք, մրրիկ, ձյունի վրա բացվող վարդեր, դառը լացող Հիսուս («Հիմա երկրում իմ բարձրիկ», հ. 2, էջ 64).

Բուքն է, մրրիկն է կոծում,
 Դառն է թախիծը նրա.
 Վարդեր են անվերջ բացվում,
 Վարդեր՝ ձյունի վրա:

Եվ լալիս է Անցորդը - լույս
 Եվ գնում է դառը լացով.-
 Օրհնի՛ր, օրհնի՛ր, Հիսուս,
 Երկիրն իմ՝ երկունքի ծով...

«Տասներկուսը» պոեմը գրվել է 1918 թվականին, Տերյանի բանաստեղծությունը՝ 1913-1916 թվականներին Պետերբուրգում: Անվիճելի է երկու ստեղծագործությունների նույն մտահղացումը, և այն, որ Տերյանն ավելի վաղ է գրել բանաստեղծությունը: Դժվար է այժմ պատճառաբանել երկու բանաստեղծների միևնույն ակունքները, միայն այն, որ իրենց միաստիկ որոնումներում՝ որպես Բացարձակ ճշմարտություն, հայտնվում է Աստծո Որդին:

«Պետք է համառ դեռ կիզեն» բանաստեղծությունն ամբողջական տպագրվել է 1940 թվականին «Գրական թերթում» և կարծես լրացնում է «Հիմա երկրում իմ բարձրիկ» ստեղծագործությանը (հ. 2, էջ 58).

Նա թևերով հրավառ
 Նա զորքերով լուսեղեն
 Գուցե գալիս է արդեն
 Դեպի երկիրն իմ խավար:

Սիրտ, հավատա, որ լուսե
 Վառ է մի նոր Բեթղեհեմ-
 Գուցե պարզված են արդեն,
 Բաց են թևերը բոցե:

Նա պիտի գա լուսեղեն,
 Նա պիտի գա հրավառ-
 Դեպի երկիրն իմ խավար-
 Խոր է խորհուրդն ու վսեմ...

Եվ այսպես՝ ներանձնյա խորքերում Կատարելության ձգտող բանաստեղծը անբացատրելի անձկությամբ թափանցել է Այնաշխարհային սահմանները, հաղորդակցվել և մարմնավորել լուսանյութ Տեսիլքին՝ որպես փրկության և վերհանումի գաղափար:

Սա արդեն ոգու հեղափոխություն էր. Հանճարը իր որոնումների ճանապարհին, Ցավի ու Տառապանքի վիթխարի փորձով իմաստնացած, գտել էր ինքնաճանաչման ուղին, հասել ոգու և ստեղծագործական բացարձակ ազատության:

Տերյանի քնարերգության սահմաններն ավելի ընդարձակ են, քան մինչև այժմ ներկայացվել է՝ անձնական ցավի դրամա, աշնան ու թախծի նվագներ, գարնան ու վերադարձի երգեր, հեղափոխական երգեր, մայրական և հայրենասիրական երգեր, սակայն չէին առանձնացվել նրա հոգևոր երգերը: Տարբեր շարքերում կան երեք տասնյակից ավելի հոգևոր երգեր, որոնք դեռ քննելու, վերլուծելու կարիք ունեն:

Բանաստեղծի հոգու պայծառացումներում կա ևս մի նուրբ երակ. դա Գեղեցկության Տեսիլքի պատրանքն է, որ հայտնվում է որպես լուսեղեն անուրջ՝ ճերմակ ու մանրիկ սարսուռներով հավելվով գրեթե բոլոր շարքերում:

Պետք էր հավաքել անըջահյուս այդ նվագները՝ բացահայտելու մեծ սիրահարի հոգու զարթոնումները, որտեղ արարվում է լուսեղեն երկրի առասպելը: Անդարծության մուգ անդունդներ նետված բանաստեղծը խաղաղ

հանգրվան է որոնում նյութական ու չար իրական աշխարհում (Շարքերից դուրս բանաստեղծություններ, հ. 1, էջ 272)։

Եթե սեր չկա ինչի՞ համար
Պիտի չարչարվեմ այս չար աշխարհում-
Կգնամ հողի գիրկը խավար,
Կըլռեմ որպես քարն է լռում...

Մութ կասկածների անձկության մրրիկի մեջ, ինքն իրեն ճանաչելուց արդեն ուժասպառ, մտածումների ծավալվող խռովքներում իրական կյանքը բանաստեղծի համար դառնում է ունայն՝ անգոր աշխարհի չարության դեմ («Անդարձ կորել է սրտիս խնդումը», հ. 2, էջ 7)։

Աշխարհն անգութ և ահավոր է,
Եվ ի՞նչ է սերը- անգոր մանուկ մի.
Չարն է հաղթողը, չարն է հզորը,
Թախիծն անգոր է, և սերն անօգ է...

Ո՛հ, սա դեռ ավարտ չէ... Սերը՝ «Աստծու այդ երրորդությունը» (ընդ-գծումը՝ Ս. Սարինյանի), միացնում է հուսալքված հոգու կասկածներն ու տագ-նապները անուրջի հայտնության տեսիլքով. անջատման ցավի, կյանքի մոլոր ուղիներում կորցրած հույսի ճանապարհներին սաստկանում է կարոտի և սպասման արբեցնող տենչանքը։ Տողերի ներսում հնչում է արծաթե ծիծաղը, բառերը խորհրդավոր արշալույսի հրաշք են քանդակում ու լռում հանդիպման խորհրդի վերջին արձագանքով («Ես չգիտեմ, ուր են տանում...», հ. 1, էջ 72)։

Եվ իմ մոլոր ուղիներում, ո՛վ գիտե,
Գուցե մի օր դու երևաս լուսերես.
Գուցե ժպտաս քո խոսքերով արծաթե
Եվ մութ սրտիս նոր խնդության լույս բերես...
...Արդյոք ու՞ր ես, խորհրդավոր արշալույս,
Հանդիպումի երջանկության պայծառ օր...

Երբեք չի ընդհատվում «ուրիշ ափերի» քնարական վեպը։ Թեթև, մեղմ երանգներով ուրվագծվում է գիշերային մեղմաշունչ մութը՝ գարնան կարմիր և

կանաչ տաք գույների շքեղ համադրությամբ: Իրար ծուլված մահվան ու կյանքի խորհուրդների մեջ քաղցր պատրանքը դառնում է փարոս, օրինանք, կյանքի չար մշուշները ցրող մի «անուշ սուտ» («Իմ մոլոր ճամփին դու հանկարծ իջար», էջ 73)։

Իրար ծուլվեցին իմ մեջ մահ ու կյանք.
Հոգիս մատնեցի քո մառախուղին,
Ընդմիջտ օրինեցի անհաստատ ուղին,
Ուր փարոսում ես դո՛ւ, քաղցր պատրանք...

Մերթ մարող, մերթ պայծառացող զգայնություններով շնչավորվում է բնությունը: Դալուկ աշնան գունատ դեղինը անէանում է տխրության խորացող ծալքերում, երկնքում դողում են աստղերը՝ ճերմակի ցլացիկ, պաղ, սարսուռեցնող դյուքանքով, անծայր դաշտում միայնակ հոգին գնում է անցնող երազների հետևից, ու մեռնող, մարող գույների ու ձևերի մեջ հայտնվում է հեռացող տեսիլքը՝ նման դյուքական գիշերվա (14 տող, էջ 82)։

Ես ընկած եմ անծայր դաշտում միայնակ,
Երազներս, երազներս, որ անցան.
Արդյոք դու՞ ես գիշերի պես հերարծակ,
Գիշերի պես խորհրդավոր, դյուքական...

Երփնագրի և երաժշտության փոխադարձ ներթափանցումներով են շնչում Տերյանի անանց կարոտները: Իրիկնամուտի տաք գույների անդորրության մեջ, որտեղ երանգները դառնում են հոգու երաժշտություն, այլևս մոռացվում են սիրտ մաշող տազնապներն ու դժգոհությունը: Ինքնասուզումներում թափառող միտքը հայտնագործում է վարդ ամպերի դողացող հրդեհը: Մայրամուտի արևից վարդագունած ամպերը և առվի կանաչ երփներփությունը համադրվում են տպավորապաշտների լուսային թրթռումների դյուքական ցլանքին, և ստեղծվում է երկնային հնչեղ մաժոր՝ ցրելով մոպե կյանքի սև ստվերների տրտմությունը («Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում», էջ 91)։

Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում,
Իրիկնաժամին նստում եմ մենակ
Կանաչ առվի մոտ, ուղիների տակ,
Ու հոգնած սիրտս էլ չի դժգոհում:

...Եվ իմ մութ կյանքի սևերում դժկամ՝
 Ես գիտեմ, պիտի ժպտաս, լուսավոր,
 Պիտի ողջունես ուղիս հեռավոր,
 -Սրբազա՛ն երագ, կարոտալի՛ ժամ...

1910 թվականի ապրիլի 7-ին Տերյանը Մարթա Միսկարյանին գրում է. «Տխուր է: Արդյոք երազա՞նքն է անլինելի մասին, թե՞ կարոտը անդառնալի – հեռավորի մասին, չգիտեմ: Ինչ-որ տարօրինակ զգացողություն է: Կարծես թե նամակը հին, վաղուց ծանոթ, մի ժամանակ մոտիկ և անակնկալ հեռացած մեկից է: Կարծես հարազատ և տարրորեն- հեռու, գուցե առհավետ, նույնիսկ ամենից հավանական է, առհավետ հեռու մեկից: Մի՞թե մենք կհանդիպենք...» (Վահան Տերյան, հ. 3, էջ 108, Մ. Միսկարյանին):

Այո՛, միևնույն ժամանակ հարազատ և այնքա՛ն հեռու Տերյանը ստեղծում էր իր «լուսե երազը»: Ինչպես երգեհոնային համանվագում, երբ անընդ-հատ հնչող, ստվերային մի ելևէջ իրեն է ենթարկում ամբողջ մեղեդին, այնպես էլ Տերյանը նետվում է դեպի աստվածացրած այդ անրջանքը՝ մշտանույն անձկությամբ հավաքելով իր հորինած լուսեղեն հեքիաթի բոլոր թելերը («Հեռու ես, անհաս, իմ լուսե երազ...», հ. 1, էջ 96)։

Քո հեռու երկրի ուղին չգիտեմ.-
 Գուցե ես ինքս ստեղծել եմ քեզ,
 Աստվածացրել եմ, որ քեզ աղոթեմ,
 Հրամայել եմ, որ վրաս իշխես...

Բնության բոլոր առարկաներն ու բոլոր հրապույրները՝ ծաղիկներ, դաշտեր, գիշեր, ջրեր, ամեն ինչ կյանք է առնում այդ խոսուն և միևնույն ժամանակ անգո ցնորքի զորավոր զգայնություններից: Ամենուր նա է՝ սրբազան տեսիլքը անուրջ կույսի ծավալուն սարսուռներով, երագի և իրականության մեջ ծփացող հիասքանչ գեղեցկությամբ («Իմ ցնորքին», հ. 1, էջ 199)։

Գեղեցկությանդ, որպես մահապարտ,
 Երկրպագում է բանաստեղծը միշտ
 Եվ ողջունում է խնդությամբ հպարտ
 Տառապանք ու վիշտ...
 ...Ո՞վ է քո ոսկի ժպիտը վառել
 Այս աղջամուղջում...

Անհունորեն հարուստ այս գույների և զգացումների մեջ չկան արյան խռովքի ու անցողիկ վայելքների ծանծրույթն ու արբեցումը. զգայական տարրերը բացակայում են ամբողջովին, և այս բոլոր տեսակի հուզումներից վեր Տերյանը կերտում է ցնորք աղջկա երփնագիրը («Ցնորք», հ. 1, էջ 45).

Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր,
Քնքուշ ու տրտում, որպես իրիկուն,
Նա մի անձանոթ երկրի աղջիկ էր,
Որ աղոթքի պես ապրեց իմ հոգում...

«Անդարձ աշխարհի վարդագույն միգում» թրթռում են անանց հույզերի ծփանքները: Բանաստեղծն այլևս չի ապրում այս աշխարհում: Նա ունի այդ շնորհը՝ չտեսնելու իրական աշխարհի հեքերն ու հեծեծանքները: Նա հայտնագործել է «թովիչ առասպելը մի անանուն երկրի: Եվ տարաշխարհիկ գույների և ձևերի աշխարհում թրթռուն գծերով պատկերվում է Նա՝ Ցնորք աղջիկը»: Բանաստեղծն այլևս մենակ չէ, Նա հաղթել է Մահին («Ես նստում եմ մեն-մենակ», հ. 1 էջ 191,).

Ես գիտեմ լուսեղեն մի երկիր,
Ես գիտեմ դյուլթական մի հովիտ,
Ուր հոգին թափում է վշտակիր
Իր թևերն ու հագնում է ժպիտ:
Ես գիտեմ մի թովիչ առասպել,
Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում.
-Քո անուշ անունով միշտ արբել,
Եվ երգով, որ բնավ չի մեռնում...

Եվ այս սիրո համանվագի ամենաբարձր, տիեզերական տոնը, որ իր մեջ է հավաքում բոլոր խորքային ու ձայնական մեղեդիները, դառնում է համարողկային սերը՝ որպես մարդեբանության բարձրագույն արտահայտություն: Այս երգերում այլևս չկան Այնաշխարհային ձայների և հնչյունների պատրանքները:

Տերյանը հեռանում էր... Ամմահություն: Հեռանում էր՝ անանձնական սերն ու կարոտները ընծայելով բոլոր մարդկանց, և դա նման էր ինքնագոհաբերումի («Իմ դուռը բաց է ...», հ. 2, էջ 79).

Իմ դուռը բաց է՝ եկեք բոլոր
 Անուղիներդ՝ բաց է հոգիս,
 Ով թափառում է ուղեմուր,
 Ում սիրտը չունի քուն ու հանգիստ.
 ...Հոգիս բացված է ծաղկի նման,
 Իմ սերը խորն է և անսպառ,
 Չէ՞ որ լուկ սերն է, սերն է վահան,
 Եվ սիրտն է, սիրտն է սրտին ասպար...

Տենդագին որոնումների մեջ, որտեղ «մուգ հավերժության դառնություն» էր քայլում, կյանքի ու մահվան առեղծվածը քննող բանաստեղծը հայտնագործում է «մարդկային» սերը, սերը մարդու, որ ավելի գեղեցիկ է, խոր: Այս սիրո մասին է ակնարկում Անթառամ Միսկարյանին գրած մի նամակում. «Ես հիմա սովորել եմ շատ բարձր գնահատել «մարդկային» սերը, սերը մարդու նկատմամբ, այլ ոչ թե սեռի, նույնիսկ պատրաստ եմ ավելի բարձր դասել: գերադասել այն սիրուց, որ հազվադեպ է գեղեցիկ ու խոր լինում»¹⁷:

Նամակը գրվել է 1909 թվականին, իսկ 1914 թվականին Ց. Խանզադյանին մի նամակի հետ ուղարկում է նաև այս բանաստեղծությունը, որի մեջ հոգու վերագարթնումի հոյակապ սլացքը ներհյուսված է ներաշխարհի անապակ շարժումներին, որտեղ սերը դառնում է ինքնընծայման պատարագ («Սիրում եմ ես նրանց...»):

Սիրում եմ ես նրանց, որոնք խենթ են ու անտուն,
 Նրանց, որոնք կայան չունեն և չունեն խնդում:

...Ա՛խ, կուզեի ես հարազատ և ընկեր լինել
 Նրանց, որոնք մոռացված են բանտերում անել:

Եվ կուզեի եղբայր լինել նրանց, որ մթին
 Չարչարանքում կորցրել են կրակը հետին...

¹⁷ Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, «Հայաստան», 1979, էջ 297-298:

«Միսաք Մեծարենցը սիրելի- գրում է Հ. Օշականը,- կը նշանակե Վահան Տերյանը հասկնալ (ինչպես է եղած արդեն իրականությունը արեւելահայ մեկ հատիկ իրաւ քնարերգակին համար»¹⁸:

Այսպես է մտածում Հ. Օշականը՝ «արեւելահայ մեկ հատիկ քնարերգակը», այսպես էր մտածում նաև Ավ. Իսահակյանը՝ «Վերջին երգիչը մեր քնարի». գուցե ծայրահեղություն է այսպիսի գնահատականը: Սակայն, ո՛չ: Նա տենչաց Գեղեցկությունը՝ որպես փրկություն, որպես գերագույն բարիք: Նրա համար Գեղեցկությունը միակ ճանապարհն էր դեպի Անսահմանն ու Անիմանալին: Նա հյուսեց անուրջների գիրքը և բոլոր բանալիները հանձնեց ժամանակին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տերյանի քնարերգության մեջ միատիկան անհրաժեշտ է դիտել որպես առանձին թեմա, նրա բանաստեղծական գեղագիտության բարձրագույն ըմբռնում և որակ, նրա հոգևոր լույսի և աշխարհընկալման բացարձակ արտահայտություն: Սկսած «Մթնշաղի անուրջներ» ժողովածուից մինչև «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», շարքերից դուրս մնացած երգերում և անգամ սևագրություններում Տերյանն ապրել է Այնաշխարհայինի կարոտներով:

Երկու աշխարհների՝ Այնաշխարհի և Այնաշխարհի սահմանագծերում ապրող բանաստեղծի հոգին մշտապես թափառել է խորհրդավոր Անհայտի հեռուներում: Գեղեցիկի բարձր գիտակցության մեջ Տերյանը հայտնագործում է Աստծուն: Լուսեղյան հայտնությունը դառնում է միակ նշանակալից ու կարևոր տարրը Տերյանի քնարերգության մեջ:

Բանալի բառեր - անդարձություն, մթնշաղ, անուրջ, տեսիլ, թախիծ, ուրու, արև, ցնորք, մահ, հարություն:

ЛЕГЕНДА ЛУЧЕЗАРНОЙ СТРАНЫ: ВААН ТЕРЬЯН

АИДА МАРТИРОСЯН

Мистику в лирике Тереяна следует рассматривать как отдельную тему, наивысшее восприятие и качество его поэтической эстетики, исключительное выражение его духовного света и миропонимания.

¹⁸ **Օշական Յ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, իններորդ հատոր, Անթիլիաս, Լիբանան, 1980, էջ 450:

Начиная со сборника «Грезы сумерек» до сборников «Ночь и воспоминания», «Золотая сказка», «Золотая цепь», в невключенных в эти серии работах и даже в черновиках Терьян жил в тоске по потустороннему миру.

Душа поэта, живущая на грани двух миров–реального и потустороннего, всегда бродила в таинственных далях Неизвестного.

В высоком осознании красоты Терьян открывает Бога. Открытие сущности Света становится единственно важным и значимым элементом лирики Терьяна.

Ключевые слова – безвозвратность, сумерки, греза, видение, тоска, призрак, солнце, фантазия, смерть, воскресение.

THE LEGEND OF THE SPIRITUALLY ENLIGHTENED LAND BY VAHAN TERYAN

AIDA MARTIROSSYAN

It is a necessity to consider mysticism in Teryan's lyric poetry as a separate theme, as the highest perception and caliber of his poetic aesthetics, the absolute expression of his spiritual illumination and world-vision.

In all his works, starting with "Twilight Dream", "Night and Memories" "Golden Tale", "Golden Chain", and in other poems not included in these collections and even in his drafts Teryan craves for life in the other world.

The spirit of Teryan, living on the border of these two Worlds, has always wandered in the mysterious faraway obscurities. The poet discovers God in his exceptional perception of Beauty. The revelation of the Essence of Light becomes the only significant element in Teryan's lyric poetry.

Key words – irrevocably, twilight, dream, vision, melancholy, ghost, sun, fantasy, death, resurrection.